

կար: Այո՛, վասն զի քո իսկ անկատարութեան կարեւոր հետեւանքն էր: Բայց իմաստուն մարդի հոգւոյ հանգստութիւնը, որտի անվրդով խաղաղութիւնը ամենայն անբաղդութիւնների մէջ, իւր հոգւոյ մեծութեան եւ յաղթող զօրութեան կարեւոր ու անուրանալի հետեւանքն է: Որչա՛տ որ հոգիք է մեր հոգին, այնչա՛տ աւելի մօտ էնք Աստուծոյ. եւ որչա՛տ որ Աստուծոյ մօտիկ է մեզ, այնչա՛տ ազատութիւն էնք մենք: Ի՞նչպէ՛ս, որ ինչպէ՛ս էր մեր վերայ Բանեցիւնը:

Այսպէս լուծվում են: պարզվում են մեր աչքի առաջին մեղ երեւած ամենայն հակառակ բաները ամենափառաւոր կերպով: եւ մենք տեսնում ենք, որ ոչ միայն ներհակ չեն միմեանց, այլ հիանալի համաձայնութիւն կայ ամեն բանի մէջ: Ամենայն բան մեր բարւոյն պէտքէ ծառայի, ամենայն բան մեր համար է, վասն զի Աստուած մեր համար է: Աստուծոյ նախասահմանութիւններն իմաստութեամբ են, արդարութեամբ, ու բարի են միանգամայն. մեզ անկամբ գերիներ անելու համար չեն, այլ ընդհակառակն մեր բանական հոգւոյն աւելի բարձր ազատութիւն տալու համար. վերին տեսչութեան առաջուանից սահմանուած տնօրէնութիւններն լինում են եւ ծանրանում մարդիս վերայ, որ նորան դէպ ի Աստուածայինը բարձրացնեն տանեն: Ո՛հ, ի՞նչ անհամեմատ մէջ հարստութիւնն ունենալ է մարդիս համար Աստուծոյ ու Աստուծոյ իմաստութիւնը ճանաչելը: Ի՛նչպէս անքննելի են նորա գաղափարները եւ անհասանելի նորա ճանապարհները:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԶԷ,

ԱՆՑՔ:

Ակնաբուժական հիւանդանոցի մէջ փոքրիկ սենեակ մի. Հիւանդանոցը գտնվում է Պետերբուրգի կենդրոնում, բազմամարդ փողոցներից մէկին մէջ. բայց փոքրիկ սենեակը բարձրագոյն յարկումն է եւ լուսամուտները բակն են նայում, ուստի փողոցի աղմուկը այնտեղ գրեթէ չէ հասնում:

Երեկոյ է. Խորին լուրժիւն: Լուսամուտների կրկնակի սև վարագոյրները, բարձր եւ մերկ պատերը, սենեակին համարեա մէջը ջգված հին մեծ վառա-

րանը, կապոյտ լուսամտիփի տակ վառվող ճրագի աղօտ լոյսը թատրոնական բեմ մի ներկայացնում են։ Այս ընդհանուր տպաւորութեան կարծես ընդդիմապատկեր են կազմում երկու առարկայ սեղանի վերայ, որ ծածկված է — ինչպէս երեւում է — ոչ թէ հիւանդանոցի, այլ մասնաւոր մարդի բերած կարմիր երիզաւոր սփռոցով, զրված է բաժակ մի, մանր վարդագոյն աստղների փնջով, և սեղանի մօտ հնաձև բազկաթոռի վերայ ընկողմանած է մատաղահաս օրիորդ մի, գլուխը բազկաթոռի թիկունքին յենած և ոտները թղթեայ արկղին վերայ տարածած, ճրագը վառվում է բարձր աշտանակի վերայ, և չնայելով լուսամուտին, կարելի է օրիորդին երեսը նկատել. — նա դեռ բոլորովին մանկահասակ է, նորա բոլոր երեսն այնչափ կարմիր է, որ տարօրինակ է թուում հիւանդանոցում նորան տեսնելը։ Նիստիակ աչքերն վեր են նայում. և երբ կոպերը բացվում են, փայլուն սևորակ և գեղեցիկ աչքին մէջ հազիւ հազ նշմարվում է դիմահար փոքրիկ բիծ մի. այս բիծն ամեն ինչ պարզում է. սա լուսն (блѣнмо) է։

Տխուր խորհուրդներ որոճում է օրիորդը մտքում. « 15 բուբլի հիւանդանոցին, 5 բուբլի խոհանոցում ճաշ, այն պայմանով որ մի բաժինից աւելի չուտեմ, այսօր թարմ սպաս և երեկուանից մնացած պաղ խորոված. վաղը տաք խաչ և այսօրուան սպասի մնացորդը, սենեակի վառարանում եղկացրած, նաև թէյ, շաքար, ըստ որում չէ կարելի ամենեկին տաք բան չխմել։ Բոլոր բժիշկներն առաջարկում են սննդարար կերակուր, Հապա բժշկի օգնակա նը, հապա դայեակը դարձեալ տրտմութեան մէջ է ընկել, ինչպէս որ սովորութիւն ունի իսկ և իսկ ամսագլուխներին դիտել. այս մեղամաղձութիւնը փարատելու հնարն ինչ է, գիտեմ. — բուն վարձից դուրս կտոր մի չիթ կամ քաթան ընծայել, Սա ի հարկէ շատ հեշտ է, բայց բանն այս է թէ ո՞րտեղից գտնեմ մի բուբլի ընծայի համար, մինչդեռ դեղորայքի համար, որ անհրաժեշտ պիտոյքս է, փողս բաւական չէ, եւ ինչի՞ց է, որ մեր պ. բժիշկները այնպէս թանկ թանկ դեղեր են գրում. 2 ռ. 73 կ., 1 բուբլի 90 կ. Այո, աղքատին ծանր է հիւանդանալը »։

Օրիորդը տեղում ուղղվեցաւ, սեղանին մօտեցաւ, պահարանից հին քսակ մի հանեց, բացեց և եղած շեղածը թափեց ծնկին վերայ լցրեց. մէկ անգամ համարեց, միւս անգամ համարեց և ջղային ցնցմամբ բազկաթոռից վեր թռաւ։

— Քանի անգամ կամեցայ, միշտ կամենում էի և գիտէի որ հարկաւոր է ծախսածս գրել — ասումէր նա վրդովեալ ձայնով, ահա չգրեցի, ինչ դուրս եկաւ. ո՞ր գնացին փողերս, Տէ՛ր Աստուած։

Քսակը ձգեց լուսամուտը, որ ծածկված էր գրոտած տետրակներով, թերթերով և ձեռագիրներով, և սկսեց սոցա կարգի բերել. Տետրակները զընելով թերթեց բարակ մատերով. յետոյ հառաչելով բոլորը միասին հաւաքեց, լուսամուտից հեռացաւ և սկսեց արագ արագ շրջել սենեակին մէջ, Թուխ վարսերով ծածկված նորա գլուխն աւելի գեղեցկութիւն էր ստանում լայն և բարեձև ուսերին վերայ, կապոյտ ասուեռայ կրկնոցը նորա բարձր և

սիրուն հասակը վայելապէս սեղմել էր:

— Աշխատանքի յոյս յայտնի է որ չկայ: Աւագս երրորդ զլիւի վերայ է մնացել սորանից երեք ամիս: տկարութենիցս յառաջ, այն ժամանակից մինչև այսօր թարգմանութիւնս միայն թերթ ու կէս յառաջ է գնացել: և ի հարկէ մինչև չաւարտեմ ոչ որ չի առնել: Ախպասանութեանս մասին որ խօսեցն ինկ չարժէ:

Արտեղ, ումից փող գտնեմ որ երկու երեք ամիս ևս մնամ հիւանդանոցում. քստ որում ասում են թէ գոնէ երկու երեք ամիս դեռ պէտք է մնամ: Եղբօրս գրեմ. — ոչ, կարելի չէ. նորա գործերն ևս վատ են գնում: չէ որ նա ևս «Երկու» մարդը չէ, նա «Երկու» համաձայն չէ ապրում — փող չէ ղիղում. իսկ կի՛ւնը, «Երկու» կիւնն է — բան ու գործը փող վատնելն է: Բարօնուհի հօրաքրոջս, ոչ, նոյնպէս անկարելի է: Այո, այո, հարազատ մայր չունենալը վատ բան է:

Օրիորդը մօտենում է մահճակալին և տխրագին քնքշութեամբ ղիտում է պառաւ կնոջ մի մեծ ու գեղեցկարուեստ լուսանկարը, ձերմակ լաշակով, քնքոյշ երեսով և իւր աչքերին նման սևօրակ վառվռուն փայլուն աչքերով:

Ջարմանք է. քսան և չորս տարի ապրել և մի բարեկամ, մի ծանօթ անգամ չունենալ, որից կարելի լինի 20—25 ռուբլի փոխ առնել, համար ձակ երթալ և ասել. «Խնդրեմ ինձ 20 ռուբլի տաք, հարկաւոր է» և ուրիշ ոչինչ, այսպէս ուղղակի ասել: Այո, սա ի հարկէ բոլորովին հասարակ խօսք է. բայց նա այս խօսքն իսկ ասել կարող չէ, ոչ մի ներքին համոզում օգուտ չի անել: Եթէ նա ինքն փող ունենար, և ուրիշ մէկը նորանից փող խնդրէր, նա կտա՞ր. ի հարկէ կտար. լաւ, նոյնպէս ևս եթէ ինքն ուրիշից խնդրէ. . . Այնու ամենայնիւ խօսքը լեզուից չէ պրծնում:

Նորա լաւ միտքն է թէ քանի՛ մի օր յառաջ, խաչը գրաւ դնելու նախընթաց մէկ երեկոն ի՛նչ ղրուածեան մէջ էր: Բսակում 5 կոպէկ ևս չմնաց, որ պատառ մի հաց գնէ և ցաւած աչքը կապելով նստեցաւ գրելու: Թարգմանութիւնն աւարտելու, բայց անողջ աչքը շուտով դադարեցաւ, որ տկար աչքին վերայ ևս ազդեց, և յաջորդ օրը բժիշկը ծանր նկատողութիւն արաւ այս մասին: Սիրտ շանելով խաչին ձեռք տալ, հիւր գնաց, որպէս զի 5—6 ռ. փոխ առնէ: Պատուական և սիրելի ընտանիք մի էր այն վաղուց իւրեան ծանօթ, տիկիկներ և մէկ երիտասարդ: Անընտանիք երիտասարդներն ամեն օր այնտեղ ծաշում են: Լաւ յարմար է, այլ ի՞նչ: Այնու ամենայնիւ չխնդրեց: Զղային անբնական կենդանութեամբ ամբողջ ղիշերն անընդատ խօսեցաւ, առական պատմեց, խմբագրողներին, լրագիրներին, Ֆէլիեռնոստներին, բժիշկներին քաջկոտեց, անթիւ խիստ սրամիտ բաներ ասաց, բայց մի բան որ իւրեան պէտք էր, անհրաժեշտ էր, չասաց ի՛նչ հասարակ խօսք, բայց անկարելի է ասել թէ «Խնդրեմ 5 ռ. փոխ տուէք ինձ. վաղն ուտելիք չունիմ»:

Առաւօտը թէյն առանց հացի խմեց, Բժշկի այցելութենից յետոյ իւր

խաչոյ մայրական գեղեցիկ ոսկեայ խաչը — իւր վերջին գանձը գրաւ զրեց 15 բուրլիի գրաւատերի Խղճ՝ նշանակած գնով։

Փողերը հալեցան, ամիսը վերջանալու մօտ է։ Գրաւ գնելու ոչինչ չկայ։ Ի՞նչ, նորից երթայ լեզու թափելու։

Օրիորդն ուսերն թոթովեց և գլուխը կախեց։

Յանկարծ մոգբիս մէջ բարեյաջող խորհուրդ մի ծագեց, և քաղոր ժպիտով մէկէն երեսը փայլեց. երկու ձեռքով նա մահճակալի թիկունքը բռնեց և նորա վերան ծռելով աւելի մօտից սկսեց ժպիտներն նայել պատկերին իւր կարճատես գեղեցիկ աչքերով։

— Գտայ, գտայ, Մատենագիրներին օգնող ընկերութիւնը, Լաւ, նա իրաւունք ունի. անտարակոյս, ի հարկէ իրաւունք ունի. նախ իւր վէպը առանձին հրատարակութեամբ մի մեծ գիրք է կազմում. յետոյ ուրիշ փոքր վէպ մի լրագրում ունի. յետոյ մի պատմութիւն, յետոյ ֆէլիէտօններ, յետոյ թարգմանութիւններ, Բաւական չէ՞, այլ ի՞նչ պէտք է։ Գրականական ընկերութիւնն նպաստ տալու միտք ունի ի հարկէ ոչ Տուրգենեւիին և Կոմս Տօլստօյին, այլ երիտասարդ անապահով տաղանդներին, Բայց այժմ խնդիրն այն է թէ փնչպէս զիմէ, ի՞նչ ծանապարհով, ի՞նչ կղանակով գործին ձեռնարկէ։

Մէկ երկու վայրկեան աչքերը փակեց, և յետոյ բացեց. այդ ևս գտաւ. նախագիծը պատրաստ է։ Լաւ միտքն եկաւ։ Լրագրում կարդաց որ Բ. երեւելի մատենագիրն եկել է. այս լուրն հաստատուեցաւ, որ յիրաւի Բ. բազմաթիւ նշանաւոր երկասիրութիւնների հեղինակն եկել է։

Օրիորդը նախ մտածելով հեղինակի քանի մի գրուածների և գրականական յատկութիւնների մասին, առ ժամանակ տարակուսութեան մէջ ընկաւ. սակայն բուն Պետերբուրգի մատենագիրը տեսնելու հետաքրքրութիւնը նորա անխուսափելի պիտոյքին վերայ աւելացաւ, և շուտով փարատեց նորա վայրկեանական տարակուսանքը։

Գտարկ բան է. պէտք է երթալ։ Պէտք է նամակով յայտնեմ իմ իրաւունքներս. մատենագրական գումարից նպաստ ընդունելու, և խնդրեմ Բ. ին, որ իւր կողմից ջանք անէ և խնդիրս յուղարկէ ուր հարկ է։ Այսքան, այլ ևս ուրիշ ոչինչ։ Սա որ բողոքովին հասարակ բան է. սա 20 բուրլի խնդրել չէ. մանաւանդ որ այսպիսի յայտնի պարագայ — հիւանդանոց, հիւանդութիւն — ամենքին հասկանալի է։ Ո՞վ չէ հիւանդանում։ Ի հարկէ կհասկանայ այս. ինքն ևս մատենագիր է։ Մանաւանդ նա ինքը վէպ մի գրեց, որտեղ կարօտեալ մատենագիրների զրուցիւնը նկարագրում է. ուրեմն և գործն իւրեան ծանօթ է։ Ա՛խ, գոնէ փոքր ինչ օգնութիւն, գոնէ այնչափ որ պարզերես ապրէի մինչև ամսագլուխը և դայեակի տխրութիւնը գոնէ մէկ ամսով փարատէի։ Յետոյ աչքս կլաւանայ, գործ կգտնեմ — ա՛մեն ինչ կլինի . . .

Կլինի՞ արդեօք. — անտարակոյս, նորա փայլուն կենդանի աչքերը վկայում են, թէ այլ ևս ոչինչ կասկած չունի։

Տասներորդ ժամը խփումէ։ Հասարակաց սենեակից նրբանցքով (корридоръ) փոքր սենեակն հասնում են կաղամիէ թթու ապուրի և թթու հացի հոտերն, անորոշ, խառն խօսակցութիւն, քնած հիւանդների խուկոցը և արթունների ծիծաղը։

Դուռը բացվում է։ Ներս է մտնում դայեակը, սա լիակուրծք, դժգունադէմ կին մի է, գորշ հագուստով և ճերմակ լաչակով, դէմքը — ժամանակին և պարագային յարմար — կամ իւր արժանաւորութեանն արտայայտիչ ձև է առնում կամ շողոքորթ ժպիտ։ Այս անգամ անվրդով արժանաւորութեան արտայայտութիւն է տիրում թէ դէմքին վերայ թէ ձայնին մէջ։

— Կհրամայէք, օրիորդ, անկողինդ պատրաստեմ։

— Խնդրեմ, դայեակ։

Օրիորդը նոր վճռած խորհրդի ազդեցութեամբ բոլորովին զուարթացել է և կամեցաւ տխուր դայեակը խօսեցնել և շարժել։ Այս բանը խիստ զիւրին է։ որովհետև դայեակը ըստ հին սովորութեան միշտ աչքացաւով հիւանդներին ծառայում է, որոնք իսկապէս առողջ մարդիկ լինելով, միայն աչքացաւի համար անգործութենից և ձանձրութենից մաշվում են, ուստի և դայեակը վարժվել է անօրինակ ճարպիկութեամբ և հնարագիտութեամբ գործածել լեզուն։ Պէտք է միայն խօսքի թել տալ նորան, այնուհետև ոչ մի մեղամաղձութիւն նորա խօսքերին առաջնէն առնել կարող չէ։

— Է՛, դայեակ, նոր հիւանդներ եկան թէ ոչ — հարցնում է օրիորդը, նորա ամենազգայուն կողմը գրգռելով։

— Ո՛չ, օրիորդ, պատասխանում է դայեակը թախծազին։

— Այդ վատ բան է, դայեակ։

— Հարկաւ որ վատ է, օրիորդ։ (Ամեն խօսքի վերայ հետզհետեւ բացվում է)։ Այս ինչ անպիտան տարի է, ես ևս չգիտեմ, հերու այս ժամանակ — ինչ պահեմ, օրիորդ — քանի՜ քանի լուսնաւոր, դեղին ջուր իջած աչքեր և շլեր բժշկվում էին։ միայն արուեստական աչքերի համար որքան մարդ եկան։ Այս տարի իմ մեղքից այսպէս բան չկայ, իսկ իմ սենեակներս զատարկ ու պարապ մնացել են։ Մեր վարձն ընդ ամենն հինգ ռուբլի է, կերն ու հագուստն ևս մեր կողմից։ Սա ևս եղաւ կեա՞նք։ Մեղայ, մեղայ քեզ, Տէր։

— Ուրեմն այստեղ արուեստական աչքեր ևս դնում ե՞ն, դայեակ։

— Ի՞նչպէս չէ. հանում են և դնում։ ինչ որ կամիք, ամեն բան, կարգով, կանոնով։ Անցեալները ծարտարագործ մի եկաւ. նա հերու իմ սենեակներիցս առաջին Թում երկու ամիս պառկեցաւ, աչքը հանեցին. այժմ զրկած աչքովն եկաւ, Հարցնում եմ. ի՞նչպէս է աչքդ, պարոն։ — Լաւ է, դայեակ, պատասխանում է։ Զմեռը քիչ մի մրսում է, երբ ճանապարհ եմ գնում, և ես այն ժամանակները հանում եմ։ Այսպէս ասում էր նա։

— Եսել է թէ ամառը, շոգ ժամանակ, բոլորովին լաւ է լինում, դայեակ։

— Պէտք է այդպէս լինի, օրիորդ։

Հիւանդանոցն ևս իւր առասպելներն և աւանդութիւններն ունի։ Օրինակ, պատմում են թէ լուսնաւոր ըմբոստ տէրտէր մի կար, որ, չնայելով թէ արգելւած էր, տասնևվեց անգամ միմեանց վերայ փռչտում էր, և չէր թողնում որ քթի տակը չփնն, որ ինչպէս յայտնի է դադարեցնում է փռչտալը։ որովհետեւ սաստիկ արգելւած է վիրահատութենից յետոյ փռչտալ։ Նոյնպէս պատմում են սե ջուր իջած սպայի (զ'նւորի) մասին, որ դասակի սիրականն էր։

— Անկողինդ պատրաստ է. հրամեցէք, օրիորդ։

— Սպան ևս այդպէս էր, տիրուհի։ Գառնում էր այս կողմ, դառնում էր այն կողմ, ողորմած Աստուած, Ասում էր, ամբողջ գիշերը կոպս կոպի չէ դիպել — այսպէս էր ասում հոգիս։ Նորա աչքը սե ջուր էր իջել, տիրուհի։

Բայց տիրուհին սե ջուր ունեցող սպային չնմանեցաւ, այս գիշեր լաւ քնեց. ցաւած աչքերը մէկէն փակվեցան, երբ նա միտքը բերեց իւր բարեգուշակ խորհուրդը։ Քիչ մի երկչոտանում է, և կրկին ինքն իւրեան յոյս է տալիս։

Առաւօտը նորա առաջին բանն ու գործն եղաւ ընկերութեան գրելու նամակը. — Ի՛նչպէս սկսե, Պէտք է որ նամակը լաւ և միւսնոյն ժամանակ պարզ լինի. պերճախօսութիւն հարկաւոր չէ։ Պէտք է նոյն իսկ իրողութիւնը խօսի։ Պատմել իւր անցեալ գործունէութիւնը և այժմեան հիւանդութիւնն ու դրութիւնն հիւանդանոցում։ Բարեբաղդաբար մի թերթ անգլիական մեծ և անուշահոտ թուղթ և հաստ ու դեղին անգլիական պահարան ևս կայ։

Նամակը շատ գեղեցիկ դուրս եկաւ։

Պարզն եկաւ հագուստին։ Այս մասին ևս հարկաւոր է մտածել. մարդիկ ինչ որ չասեն, բայց շատ ուշադրութիւն են դարձնում հագուստին վերայ, և մանաւանդ Ք. հագուստներից այլ ևս բան մնացել է որ չնկարագրէ իւր մէկ գրուածին մէջ, Պէտք է զարգարուն հագնվել, կարելի ևս չէ. բայց վերջապէս կարելի ևս չէ փետուր փոխված սագի նման հագնվել։ Աստուած չանէ։ Առած կայ, թէ հագուստիդ նայում են և այնպէս ընդունում։ Առածը սուտ չէ ասում։

Վերնազգեստ, շուէդի ձեռնոցներ, նամակը, գրքերը, այցատոմսներ . . . որչափ բարակ մտածմունք, որչափ վրդովմունք։

Ի՛նչպէս աչքերը զոյգ բացվում են, ի՛նչպէս սիրտը մարում է, տեսնելով պղնձե տախտակին վերայ մատենագրին մականունը, Հեռանայ, — ո՛չ, ո՛չ. տղայութիւն է։ Սկզբունքին մէջ ոչինչ վատ բան չկայ. ուրեմն և հետեւանքը չէ կարող վատ լինել։ Բացասաց, կհեռանայ. բայց այս անհաւանական է։

Ելէկտրական նուրբ հնչակը քաշեց. այժմ ի հարկէ անկարելի է հեռանալ. բայց կարելի է ուրիշ մարդի անունն հարցնել և ասել. ներեցէք, սխալված եմ. ինձ ասացին թէ . . . ո՛չ, ո՛չ. դատարկ բան է, տղայութիւն է։

Քօղի տակ կարմրելով և սրտատրոփ հարցնում է նա հաստատուն ձայնով.

— Այստեղ է բնակում ա. ք.

— Այո. ի՞նչ էք հրամայում:

— Գործ ունիմ. խնդրեմ այս տոմսակը . . .

— Հրամայեցէք:

Ապաստաւորը դուռը փակում է և տոմսակը տանում:

Անցնում են 5, 8, 10 վայրկեան:

— Անտարակոյս նա շտապով կարեւոր բան մի գրում է. Հեռուից, երկրորդ սենեակում վարագոյրը շարժում է. ցանցաձև, նեղ ու բարակ մարմին մի տատանում է և հետզհետե մօտենում: Նախասենեակի դռնում երևում է ոտից մինչև գլուխ մոլծ պիսակ, ցանցաձև կտորով պատառված մէկը. դժգոյն կառաւր աչքի է զարնում այս ցանցերի վերև, և առանց թենոյի ձեռքերում բռնած ունի և տրորում է այցատոմսը:

Օրիորդի երկչոտ աչքերը յառեցան մատենագրին վերայ. Հետաքրքրութիւնն և ակնկալութիւնը ճնշում են խոյս տալու դիտաւորութիւնը:

Մատենագիրը երկու քայլ հեռաւորութեամբ կանգնում է և նայելով եկողի երեսը որոշ ձայնով ասում է.

— Չեղ չեմ կարող ընդունել:

Ինչի՞ համար, համարձակ հարցնում է օրիորդը, որ չէր սպասում այնպիսի անակնկալ ծանուցման:

— Արովհետեւ զբաղած եմ:

— Ես ձեզ շատ արգելք չեմ լիներ, Չեղ մէկ—երկու խօսք ունիմ ասելու գործի մի մասին, Մէկ երկու վայրկեան . . .

— Հա՛. . . եթէ այդպէս է, հրամայեցէք, Խնդրեմ նստէք, Ինչով կարող եմ ձեզ օգտակար լինել:

(Թաք.ժ.)

Ս. Մ.

ՃԱՆԱԿԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՆԱՀԱՆԳՆ ԿԱՐՈՒՑ.

(1878 հ.ի. 19. — 1879 թ.ի. 8.)

Մեր այս ի պաշտօնէ կատարած ճանապարհորդութեան պատճառն կամ նպատակն արդէն հրատարակուեցաւ («Արարատայ. փետր. ամսաթերթում»), բայց մեր ծանօթներն ու բարեկամներն մեզ կստիպեն, որ մեր ունեցած դիտողութիւններն ևս հրատարակեմք. ի հարկէ նոքա կը ցանկանան լսել մեր դիտողութիւններն իրրեւ հետաքրքրական, բայց մեք կանխաւ կը խոստովանիմք, թէ մեր այս յանձնառութեամբ պիտի չկարողանամք նոցա հետաքրքրութիւնն գոհ անել ինչպէս բանիրուն ճանապարհորդ մի, որ հին